ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

17.01.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան <<17>> 01 2019թ.

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ-ը**, ի դեմս տնօրեն **Վ. Աբրահամյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ-ն,** ի դեմս Կոոպերատիվի նախագահի ժ/պ **Վ. Բավեյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 17.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.13-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (կցվում է):

1.2 Սահմանել, որ Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| <<ԳՆՈՐԴ>> | <<ՎԱՃԱՌՈՂ>> |
|---|---|
| ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ | <<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ |
| ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 | ք. Չարենցավան, Պարոնյան 2 |
| <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ | <<Արդշինբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 16028014479300 | Հ/Հ 247300003693 |
| ՀՎՀՀ 02809386 | ՀՎՀՀ 02803416 |
| | էլ. հասցեն՝ armmkoop@mail.ru |
| | հեռ. (093) 00-16-76 |
| Տնօրեն՝ Վ. Աբրահամյան | Նախագահի ժ/պ՝ Վ. Բավեյան |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
17.01.2019թ. կնքված <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>> ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<<17>> 01 2019թ. կնքված համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09411700 | Սեղմված բնական գազ | 320000 | 640000 | 960000 | 1296000 | 1632000 | 1968000 | 2304000 | 2640000 | 2980000 | 3300000 | 3620000 | 3940000 | 3940000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

<<ԳՆՈՐԴ>>
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16028014479300
ՀՎՀՀ 02809386

Տնօրեն՝ Վ. Արրահամյան

(ստորագրությունը)
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ
ք. Չարենցավան, Պարոնյան 2
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 247300003693
ՀՎՀՀ 02803416
էլ. հասցեն՝ armmkoop@mail.ru
հեռ. (093) 00-16-76

Նախագահի ժ/պ՝ Վ. Բավեյան

(ստորագրությունը)
Կ.Տ